Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի, Աշոցք համայնքի, Ղազանչի բնակավայրի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ առաջին դասարանի դասվարի /14 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Ուսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.Անձը հաստատող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5.Ինքնակենսագրություն (Ձև 5),

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10.Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/ մասնակցած լինելու դեպքում/։

11.Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակը համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 14-ին՝ ժամը 14:30-ին ՀՀ Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Աշոցք համայնք, Ղազանչի բնակավայր, 8-րդ փողոց, շ.12։

Տեղեկությունների համար զանգահարել /093521699/ հեռախոսահամարներով։